

Դատական Գործ N: ԱՎԴ/0391/02/11

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	06-07-2011
Հայցվոր/դիմող	
Անուն	Ժասմեն
Ազգանուն	Գալստյան
Հասցե	Արարատի մարզ, գյուղ Սայաթ-Նովա
Սեռ	Իգական
Ներկայացուցիչ	
Անուն	Նելլի
Ազգանուն	Մովսիսյան
Հասցե	ք.Երևան, Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան փողոց 38/24
Սեռ	Իգական
Պատասխանող	
Անուն:	Արարատի մարզպետարան
Հասցե:	ք.Արտաշատ
Տիպ:	ՏԻՄ /Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ քաղաքապետարաններ, մարզպետարաններ, գյուղապետարաններ/
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին գործատուի անհատական իրավական ակտը անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը վճարելու պահանջի մասին:
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	6.2
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ստացման կարգը:	Առաջին անգամ
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	06-07-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Արարատի և Վայոց Ձորի մարզ
Դատավորի անուն:	Լևոն Ռուբենի Արազյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Արարատի և Վայոց Ձորի մարզ
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Որոշման ամսաթիվ:	08-07-2011
Այլ նշումներ:	

Դատաքննության ամսաթիվ:	05-08-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-07-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	2
Դատաքննության ամսաթիվ:	19-08-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	05-08-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համար:	2
Նշանակվել է:	Վճիռ/որոշում հրապարակելու օր
Հայցի լուծման ամսաթիվ:	19-08-2011
Հայցի լուծումը:	Մերժվել է
Հոդված	
Հոդված	ՀՀ ԱՕ 113
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ (վճիռ, որոշում):	<p>Գործ ԱՎԴ/0391/02/11 Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը</p> <p>նախագահությամբ դատավոր՝ Լ.Արազյանի քարտուղարությամբ՝ Վ.Վարդանյանի մասնակցությամբ. հայցվոր՝ Ժ. Գալստյանի (անձն. AF0215886, տրված 26.12.2000թ., 044-ի կողմից) լիազոր ներկայացուցիչ՝ Ն.Մովսիսյանի պատասխանողի լիազոր ներկայացուցիչներ՝ Վ.Գրիգորյանի Ա.Մկրտչյանի</p> <p>2011թ. օգոստոսի 19-ին Արտաշատ քաղաքում</p> <p>Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի ժամենա Գալստյանի լիազոր ներկայացուցիչ Նելլի Մովսիսյանի ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետարանի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին գործատուի անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը վճարելու պահանջի մասին,</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց՝</p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը. Ժամենա Գալստյանի լիազոր ներկայացուցիչ Նելլի Մովսիսյանը հայցով ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետարանի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին գործատուի անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարը վճարելու</p>

պահանջով 06.07.2011թ. դիմել է դատարան:
Դատարանի 08.07.2011թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Գործի քննությունը նշանակվել է 2011թ. օգոստոսի 5-ին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95 հոդվածի համաձայն պատասխանողի կողմից ներկայացվել է հայցադիմումի պատասխան:
Գործի քննությունն ավարտվել է 05.08.2011թ., վճռի հրապարկման օր է հայտարարվել 2011թ. օգոստոսի 19-ը:

2. Հայցվորի դիրքորոշումը.

Լիազոր ներկայացուցիչ Նելլի Մովսիսյանը ներկայացրած հայցադիմումով և դատաքննության ժամանակ տված ցուցմունքով հայտնել է, որ ժասմենա Գալստյանը 1990թ-ից աշխատել է Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի: Աշխատանքային պարտականությունների բարեխիղճ և պարտաճանաչ կատարման, մասնագիտական գիտելիքների և մանկավարժական աշխատանքի անբասիր և հնուտ ղեկավարման շնորհիվ 1995թ. հոկտեմբերի 12-ից նշանակվել է նույն դպրոցի տնօրեն:

Արարատի մարզպետի 31.05.2011թ. թիվ 44 կարգադրությամբ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով 2011թ. հունիսի 2-ից լուծվել է նրա աշխատանքային պայմանագիրը: Համաձայն կարգադրության հայցվորը խախտել է «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 68-րդ կետի 17-րդ և 19-րդ ենթակետերի պահանջները և անվստահություն է առաջացրել գործատուի մոտ: Աշխատանքից ազատման վերաբերյալ անհատական իրավական ակտը գործատուի կողմից աշխատողին ծանուցվել է 2011թ. հունիսի 2-ին:

Գտնում է, որ Արարատի մարզպետի 31.05.2011թ. թիվ 44 կարգադրությունը հակասում է ՀՀ աշխատանքային օրենսգրքին, այլ օրենքներին, իրավական ակտերի պահանջներին, որը պետք է ձանձախել անվավեր հետևյալ պատճառաբանությամբ:

Հայցադիմումի հիմքում ընկած փաստական հանգամանքները և իրավական հիմանվորումներն են.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական)

հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոցն ունի պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպչական կազմակերպչական ձև:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակելը և ազատելը:

Նշված իրավական ակտերի համադրումից հետևում է, որ գործատուի և աշխատողի միջև աշխատանքային

հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, այնքանով, որքանով ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքը

սահմանում է միայն աշխատանքի ընդունման կարգը և գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների

դադարեցման հիմքերը, այսինքն ՊՈԱԿ-ի տնօրենի և ՊՈԱԿ-ի

աշխատողների միջև, ինչպես նաև տվյալ դեպքում գործատուի և ՊՈԱԿ-ի տնօրենի միջև աշխատանքային հարաբերությունների

ծագման, դադարման կարգը, իրավունքներն ու պարտականությունները սահմանվում է ՀՀ աշխատանքային

օրենսգրքով և կիրառելի են և պետք է կիրառվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթները:

Կողմերի միջև հարաբերությունները ծագել են աշխատանքային պայմանագրի հիման վրա, որի գործողության համար ժամկետ չի

նշվել:

Արարատի մարզպետի 31.05.2011թ. թիվ 44 կարգադրությամբ դպրոցի տնօրեն ժասմենա Գալստյանին 2011թ. հունիսի 2-ից ազատել են զբաղեցրած պաշտոնից աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 6-րդ կետի, «Պետական ոչ առևտրային

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի (ա) և (բ) ենթակետերի պահանջներով, «ՀՀ Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 68-րդ կետի 17-րդ և 19-րդ ենթակետերի պահանջները խախտելու համար: Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի (ա) և (բ) ենթակետերի՝

ա) պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով լիազորված պետական մարմինը իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) լիազորված պետական մարմինը իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը:

ՀՀ ԱՕ 121 հոդվածի համաձայն աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝

1. գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ:

2. Գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը թեկուզև մեկ անգամ թույլ է տվել սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում:

ՀՀ ԱՕ 113-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումն է աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:

Համաձայն ՀՀ ԱՕ 122 հոդվածի գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս:

2) ուսումնադաստիարակաչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:

3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

Ժասմենա Գալստյանի նկատմամբ անվստահության հիմք է հանդիսացել ՀՀ Արարատի մարզպետի 22.04.2011թ. թիվ 33 կարգադրության համաձայն «ՀՀ Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության հիման վրա կազմված ակտը:

Ակտից պարզ չէ, թե այն երբ է կազմվել: Ակտում նշված է, որ դպրոցը չունի գործավարի հաստիք և պարտադիր էլ չէ, որովհետև գործավարի գործառույթները համաձայն պայմանագրի կարող էր կատարել որևիցե մի աշխատող:

Հրամանագրքերում հրամանները ձևակերպված են ոչ գրագետ, տառախալվերով: Հետո ինչ, որ ՀՀ Կառավարության 16.06.2006թ. թիվ 875-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ

Կառավարության 2002թ. դեկտեմբերի 13-ի թիվ 2034-Ն որոշումը՝

«Վարձու աշխատողների աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման հրամանագիրքը վարելու և պահպանելու կարգը հաստատելու մասին»: Գործատուն ազատ էր հրամանագիրք վարելու պարտականությունից և եթե վարել է, ապա դա ոչ մի իրավական հետևանք չի կարող առաջացնել, անգամ եթե տառախալվերով է վարել:

Ակտն իր մեջ ներառում է ակնհայտ միտում: Ինչ նպատակ է հետապնդում նշելու ակտում, թե ով ով է և ինչ աշխատանք է կատարում դպրոցում: Արդյոք կա որևէ իրավական նորմ, որն արգելում է իրար հետ աշխատել ծնողներին ու զավակներին կամ ամուսնուն ու կնոջը:

Ակտում նշված են խախտումներ, որոնք կատարվել են 2008-2009թթ. և 2009-2010թթ. ուս. տարում:

ՀՀ ԱՕ 227-րդ հոդվածը վերաբերում է կարգապահական տույժի կիրառման ժամկետին:

1. կարգապահական տույժեր կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատանուկանության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

2. Կարգապահական տույժ չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: Եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գուրծունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման ընթացքում), ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան մեկ տարի:

Հետևաբար չէր կարող կիրառվել կարգապահական տույժ 2008-2009թթ. ուս. տարվա համար:

Ակտում գրված է, որ դպրոցի հավաքարարներ Անահիտ Մեսրոպյանի և Օֆելյա Մաթևոսյանի դրույքաչափերը սահմանված են ամսական 48.675 դրամ, սակայն նրանք ստացել են առձեռն 30.000 դրամ:

Ինչ նպատակ է հետապնդում հավաքարարներից վերցրած գրավոր բացատրությունները, եթե նրանք երկու տարի շարունակ ստորագրել են աշխատավարձի վճարման ցուցակները և ստացել իրենց հասանելիք ամսավարձն ըստ պայմանագրի:

Ակտում գրված է, որ դպրոցին պատճառվել է 1.143.300 դրամի վնաս: Ուր է այդ գումարը և արդյոք մտնում է հավաքարարների գումարը դրա մեջ:

Ակտը առ ոչինչ է նրանով, որ ստուգում կատարող անձինք դուրս են եկել իրենց լիազորությունների սահմաններից և սկսել են իրավական գնահատականներ տալ, մասնավորապես դպրոցի դասվար Ժենյա Սարգսյանի վերաբերյալ:

Ակտում գրված է, որ 2010-2011թթ. ուս. տարում դասվար Ժ.Սարգսյանը պարապում է 4-րդ դասարանում 8 ժամ մայրենի լեզու և միաժամանակ համատեղության կարգով նշանակվել է նախակրթարանի դաստիարակ, վճարվում է կաբինետի և տարրական դասարանների մեթոդ-միավորման նախագահի աշխատանքների համար:

ՀՀ ԱՕ 9-րդ հոդվածը մեկնաբանում է համատեղությամբ աշխատանքը.

1. Համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է:

Ակտում նշված է, որ Ժ.Սարգսյանը վարձատրվում է տարրական դասարանի կաբինետի համար, որը ուսումնասիրության պահին չէր գործում: Կաբինետը այդ պահին չէր գործում, սակայն 15 րոպե անց կարող էր գործել:

Ակտում գրված է, որ 4-րդ դասարանի դասապրոցեսը սկսվում է 2-րդ ժամից և նպատակը Ժ.Սարգսյանի աշխատանքային ռեժիմին հարմարեցնելն է:

Ժ.Սարգսյանը համարվում է դպրոցի լավագույն մասնագետներից մեկը, որը առարկային տիրապետում է խորությամբ, բարեխիղճ է և բարձր համբավ ունի որպես մասնագետ նաև լիազորված պետական մարմնում և «ՊՈԱԿ-ների մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի համաձայն լիազոր մարմինը իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը, ուստի վարչության պետի համաձայնությամբ (բանավոր) աշխատաժամանակը սկսվել է 9.50-ին:

Ակտում գրված է, որ դպրոցի կողմից ճաշարանաի տարածքը 72,7քմ տրված է վարձակալությամբ «Հարի» ՍՊԸ-ին՝ արտադրություն կազմակերպելու համար, որով խախտվել է դպրոցի կանոնադրության 138-րդ կետի պահանջը: Պայմանագիրը կնքվել է առանց պետական լիազորված մարմնի համաձայնության և այն չունի նոտարական վավերացում:

Համաձայն «ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 13-րդ հոդվածի հանրակրթական դպրոցն ունի իրեն ամրացված գույք, որը հիմնադրի անունից լիազորված պետական մարմնի համաձայնությամբ կարող է հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից

սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հանրակրթական դպրոցի ստացած եկամուտները հանրակրթական դպրոցի սեփականությունն են:

ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքի 22 հոդվածի վերաբերում է խոշոր գործարքների՝

1. Խոշոր են այն գործարքները կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են պետական կազմակերպության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվան նախորդող եռամսյակում տրված հաշվապահական հաշվետվությամբ պետական կազմակերպությունը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հիսուն տոկոսից ավելին: Խոշոր չեն այն գործարքները, որոնք կատարվում են պետական կազմակերպության առօրյա գործունեության ընթացքում և համարվում են տվյալ կազմակերպության կանոնադրական խնդիրներից ուղղակիորեն բխող գործառույթ:

2. Խոշոր գործարքը կատարվում է լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

Դպրոցի կանոնադրության 138-րդ հոդվածում խոսքը գնում է գույքը վարձակալության հանձնելու մասին միայն հիմնադրի անունից լիազորված պետական մարմնի համաձայնությամբ, իսկ «ՊՈԱԿ-ների մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի համաձայն միայն խոշոր գործարքն է կատարվում լիազորված պետական մարմնի համաձայնությամբ, իսկ խոշոր գործարքը կապված է պետական կազմակերպության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ և ոչ թե վարձակալության հանձնելու հետ:

«ՊՈԱԿ-ների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում կարգապահական տույժերի տեսակները, կիրառման կարգը, հետևաբար դրանք կարգավորվում են ՀՀ ԱՕ-ով և անհրաժեշտ է ղեկավարվել ԱՕ 21-րդ գլխի դրույթներով:

ՀՀ ԱՕ 223-րդ հոդվածը նախատեսում է հետևյալ կարգապահական տույժերը՝ նկատողություն, խիստ նկատողություն, սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

2. Առանձին կատեգորիայի աշխատողների համար օրենքով կարող են սահմանվել նաև կարգապահական այլ տույժեր:

3. Օրենքով չնախատեսված կարգապահական տույժերի կիրառումն արգելվում է:

ՀՀ ԱՕ 224 հոդվածի համաձայն կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

Նույն օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Նշված հոդվածի համաձայն, եթե միտում չկա, ինչի բացատրություն չեն վերցրել և միանգամից լուծել են աշխատանքային պայմանագիրը:

ՀՀ ԱՕ 38-րդ հոդվածը վերաբերում է աշխատանքային իրավունքների պաշտպանությանը.

1. Աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

2. Աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացնում են աշխատողների ներկայացուցիչները:

3. Աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

1) իրավունքը ճանաչելով.

2) մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով.

3) իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով կամ վերացնելով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ

գործատուի իրավական ակտն անվավեր ճանաչելով.
5) դատարանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմնի՝ գործատուի օրենքին հակասող իրավական ակտը չկիրառելով.
6) իրավունքի ինքնապաշտպանությամբ.
7) պարտականությունը բնեղենով կատարելուն հարկադրելով.
8) վնասի հատուցում ստանալով.
9) տուգանք (տուժանք) բռնագանձելով.
10) իրավահարաբերությունը դադարեցնելով կամ փոփոխելով.
11) օրենքով նախատեսված այլ եղանակներով:
ՀՀ ԱՕ 265 հոդվածի համաձայն աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:
Խնդրել է անվավեր ճանաչել աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին գործատուի անհատական իրավական ակտը, ժամանակա Գալստյանին վերականգնել նախկին աշխատանքում և վճարել հարկադիր պարապուրդի գումարը ամսական չվճարված միջին աշխատավարձի չափով:

3. Պատասխանողի դիրքորոշումը.
Լիազոր ներկայացուցիչ Ալբերտ Մկրտչյանը ցուցմունք է տվել, որ Արարատի մարզպետի 22.04.2011թ. թիվ 33 կարգադրությամբ «ՀՀ Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ դպրոցավարական փաստաթղթերը լրացված են թերություններով, հրամանագրերում հրամանները ձևակերպված են ոչ գրագետ, տառախալվներով: Գործատուն ազատ է հրամանագրեր վարելու պարտականությունից, սակայն եթե այն վարվում է, ապա համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի. «ՀՀ իրավական ակտերը շարադրվում են ՀՀ պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով», իսկ 6-րդ կետի պահանջով «Իրավական ակտում պետք է պահպանվի հայոց լեզվի կանոնները»:
Դպրոցում տնօրենի անմիջական ենթակայությամբ աշխատում են տնօրենի ամուսինը, տղաները և աղջիկը:
Խնդիրը ոչ թե նրանց համատեղ աշխատանքի անթույլատրելիության մասին է, այլ այն, որ դպրոցի տնօրենի կողմից տարբերակված մոտեցում է ցուցաբերվել հարազատների նկատմամբ:
Տնօրենի աղջիկը՝ Ժենյա Սարգսյանն աշխատելով դպրոցում որպես դասվար, 2008-2009թթ. ուստարում ստացել է ամսական 113.732 դրամ աշխատավարձ, այն դեպքում, երբ դպրոցում աշխատող մյուս դասվարների միջին աշխատավարձը կազմել է 78.466 դրամ, իսկ 2009-2010թթ. ուստարում Ժ.Սարգսյանի աշխատավարձը եղել է 134.493 դրամ, մյուս դասվարներինը՝ 103.345 դրամ, 2010-2011թթ. ուստարում՝ Ժ.Սարգսյանինը՝ 72.722 դրամ՝ ավելացրած նաև մեկ դրույք նախակրթարանի դաստիարակի աշխատավարձը: 2010թ. և 2011թ. տնօրենի հրամանով սահմանված սպասարկող բանվորի աշխատավարձը չի համապատասխանում փաստացի վճարումներին:
Համաձայն տնօրենի հրամանի մեկ դրույք սպասարկող բանվորի աշխատավարձը սահմանվել է 33.300 դրամ: 2009-2010թթ. և 2010-2011թթ. ուսումնական տարիներին

տարիֆիկացիաներով տնտեսվար Արթուր Սարգսյանին (տնօրենի տղան) տրվել է նաև կես դրույք բանվորի հաստիք, սահմանելով 34.000 դրամ աշխատավարձ: Սակայն կես դրույք բանվորի աշխատավարձը պետք է սահմանվեր 17.350 դրամ կամ Ա.Սարգսյանին 2010թ. հունվարի 1-ից մինչև 2011թ. մարտի 1-ը ավել աշխատավարձ է վճարվել 242.900 դրամ, որի կենսաթոշակային ֆոնդը կազմում է 36.400 դրամ, ընդամենը 279.300 դրամ:

Դռնապանի պարտականությունները 1,5 դրույքով կատարել է Կոնստանտին Սարգսյանը (տնօրենի ամուսինը), որը կատարել է նաև զանձապահի պարտականությունները:

Տնօրենը 01.03.2011թ. թիվ 113 հրամանով որդուն՝ Արթուր Սարգսյանին ազատել է աշխատանքից և նույն օրը ամուսնուն նշանակել նրա փոխարեն՝ ազատելով նրան դռնապանի պարտականություններից: Դռնապան է ընդունվել Մամիկոն Սարգսյանը (տնօրենի մյուս տղան):

2008-2009թթ., 2009-2010թթ. ուսումնական տարիներին դպրոցի սովորողների համակազմը ձևավորվել է խախտումներով և դպրոցում կրկնակի ֆինանսավորում են ստացել թվով 6 աշակերտ: Այդ խախտումները պարբերական բնույթ են կրում և համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ քան 2 ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Դպրոցի հավաքարարներ Անահիտ Մեսրոպյանի և Օֆելյա Մաթևոսյանի դրույքաչափերը 2010թ-ից սահմանվել են 48.675 դրամ, սակայն համաձայն նրանց գրավոր հայտարարության առձեռն ստացել են 30.000 դրամ:

Փաստորեն 2009-2010թթ. ընթացքում աշխատավարձի ցուցակներով նշված հավաքարարներին վճարված գումարներից նրանց փաստացի չի վճարվել 864.000 դրամ:

Դպրոցի կողմից ճաշարանի տարածքը՝ 72,7քմ, տրված է վարձակալությամբ «Հարի» ՍՊԸ-ին՝ արտադրություն կազմակերպելու համար:

Խախտվել է դպրոցի Կանոնադրության 138-րդ կետի պահանջը:

Պայմանագիրը կնքվել է առանց պետական լիազորված մարմնի համաձայնության և այն չունի նոտարական վավերացում:

Այսպիսով, խախտվել է դպրոցի Կանոնադրության 68-րդ կետի 17-րդ ենթակետը, այն է՝ դպրոցի տնօրենը ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, 19-րդ ենթակետի համաձայն դպրոցի տնօրենը սահմանված կարգով ձևավորում է հանրակրթական դպրոցի սովորողների համակազմը և 137-րդ կետի համաձայն հանրակրթական դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից լիազորված պետական մարմնի

համաձայնությամբ հանձնելու վարձակալության պահանջները:

Դպրոցի տնօրեն Ժենյա Գալստյանը դրամական արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արաքներ, որի հետևանքով «Զորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը պետական բյուջեից ավել է ֆինանսավորվել 246.200 դրամ, իսկ դպրոցին պատճառվել է 1.143.300 դրամի վնաս, որից 279.300 դրամ ավել վճարված աշխատավարձ և 864.000 դրամ հավաքարարներին չվճարված աշխատավարձ:

Նշվածը համաձայն ՀՀ ԱՕ 122-րդ հոդվածի 1-ին կետի հիմք է հանդիսանում տնօրեն Ժասմենա Գալստյանի նկատմամբ վստահությունը կորցնելու:

ՀՀ Արարատի մարզպետի 2011թ. մայիսի 31-ի թիվ 44 կարգադրությամբ «ՀՀ Արարատի մարզի Զորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ժասմենա Գալստյանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով 2011թ. հունիսի 2-ից ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1) ՀՀ Արարատի մարզպետի 22.04.2011թ. թիվ 33 կարգադրության համաձայն կազմված ակտը.

5. Կիրառելի իրավունքները.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդված, «ՀՀ Արարատի մարզի Զորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը,

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդված.

6. Դատարանի իրավական վերլուծությունները և պատճառաբանությունները.

Ուսումնասիրելով քաղաքացիական գործի նյութերը, լսելով կողմերի ցուցմունքները, հետազոտելով ապացույցները, գնահատելով դրանք, դատարանը գտնում է, որ հայցը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ՝

Դատարանը դատաքնությամբ ապացուցված համարեց հետևյալը. 01.09.2009թ. Արարատի մարզպետի և Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոցի տնօրեն ժամենա Մամիկոնի Գալստյանի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր:

Համաձայն պայմանագրի մարզպետը հանձնարարում է, իսկ տնօրենը ապահովում է Ջորակի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված պահանջների ճշգրիտ և ժամանակին կատարումը:

Կողմերի իրավունքները և պարտականությունները սահմանվել են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, դպրոցի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: ՀՀ Արարատի մարզպետի 22.04.2011թ. թիվ 33 կարգադրության «ՀՀ Արարատի մարզի Ջորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կատարվել է ուսումնասիրություն:

Կատարվելիք ուսումնասիրության վերաբերյալ մարզպետի կարգադրության հետ ծանոթացվել է հայցվոր Ժ.Գալստյանը: Ուսումնասիրության արդյունքում կազմվել է ակտ, որի մասին տեղեկացվել է Ժ.Գալստյանը և ակտը ներկայացվել է մարզպետին: Համաձայն կազմված ակտի դպրոցի տնօրենի կողմից թույլ են տրվել իրեն վերապահված մի շարք իրավունքների խախտումներ: (տես՝ ակտը)

«ՀՀ Արարատի Ջորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 68-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն դպրոցի տնօրենը ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, այնինչ, համաձայն ուսումնասիրության ակտի 2008-2009թթ., 2009-2010թթ.

ուսումնական տարիներին դպրոցի սովորողների համակազմը ձևավորվել է խախտումներով և դպրոցում կրկնակի ֆինանսավորում են ստացել թվով 6 աշակերտներ, որի հետևանքով «ՀՀ Արարատի Ջորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը պետական բյուջեից ավել է ֆինանսավորվել 246.200 դրամ:

Կանոնադրության 137-րդ կետի համաձայն հանրակրթական դպրոցի սեփականությունը ձևավորվում է հանրակրթական դպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հանրակրթական դպրոցի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

Կանոնադրության 138-րդ կետի համաձայն հանրակրթական դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից լիազորված պետական մարմնի համաձայնությամբ հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հանրակրթական դպրոցի ստացած եկամուտները հանրակրթական դպրոցի սեփականությունն են: Դպրոցի ճաշարանի տարածքը 72,7քմ տրված է վարձակալության «Հարի» ՍՊ ընկերությանը՝ արտադրություն կազմակերպելու համար:

Խախտվել է կանոնադրության 138-րդ կետի պահանջները, համաձայն որի հանրակրթական դպրոցի տնօրենն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից լիազորված պետական մարմնի համաձայնությամբ հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի:

Դպրոցի տնօրենն առանց հիմնադրի համաձայնության կնքել է

վարձակալության պայմանագիր:
 Կանոնադրության 46-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմնի՝ մարզպետի իրավասություններն են հիմնադրի սահմանած կարգով ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագրի կնքումը՝ 5 տարի ժամկետով, նախարարության փորձագիտական եզրակացության հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, վաղաժամկետ դադարեցնում է տնօրենի լիազորությունները: 9-րդ ենթակետի համաձայն հանրակրթական դպրոցին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելը, հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում գույքի վարձակալության հանձնման համար համաձայնություն տալը:
 ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:
 Դատարանը գտնում է, որ «ՀՀ Արարատի Ջորակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն ժասմենա Գալստյանի կողմից թույլ են տրվել ինչպես դպրոցի կանոնադրությամբ հաստատված, այնպես էլ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքեր:
 Հետևաբար ներկայացված հայցապահանջը հիմնավոր չէ և այն պետք է մերժել ամբողջությամբ:
 ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետի համաձայն դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

7. Եզրափակիչ մաս.

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց՝

ժասմենա Գալստյանի լիազոր ներկայացուցիչ Նելլի Մովսիսյանի հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետարանի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին գործատուի անհատական իրավական ակտն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապորդի գումարը վճարելու պահանջի մասին՝ մերժել ամբողջությամբ:
 Պետական տուրքի հարցը համարել լուծված:
 Սույն դատական ակտը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

ԴԱՏԱԿՐՐ՝ Լ.ԱՐԱՋՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը:	19-08-2011
Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Ամսաթիվ:	19-09-2011
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	23-09-2011

Էջերի քանակը:	119
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Անսաթիվ:	26-09-2011
Էջերի քանակը:	119
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	